Հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Աղավնատուն համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-2) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

1. **Աղավնատուն համայնքապետարանի առաջատար մասնագետը՝**

(ծածկագիր 3.1-2)

ա/ կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով:

բ/ կազմում է կառուցապատողներին տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը,եզրակացություն է ներկայացնում ճարտարապետաշինարարական նախագծերի վերաբերյալ

գ/աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է ինքնակամ հողազավթման կանխման կասեցման և հետևանքների վերացման աշխատանքներին:

դ/աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է սահմանված կարգով հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներին:

ե/ մասնակցում է համայնքի տարածքում շինարարության (քանդման) թույլտվության որոշման նախագծերի նախապատրաստմանը, օրենքով սահմանված կարգով միջոցառումներ է ձեռնարկում շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու համար.

զ/մասնակցում է համայնքի տարածքում ավարտված շինարարության շահագործման փաստագրման ձևակերպման որոշման նախագծերի նախապատրաստմանը.

է/ իրականացնում է համայնքի տարածքում ինքնակամ շինարարության կանխարգելման ու կասեցման աշխատանքները և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը.

ը / օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է ապօրինի հողօգտագործումները կանխարգելելու , կասեցնելու և վերացնելու աշխատանքները.

թ/ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է համայնքում հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանների ու դիակիզարանների շահագործմանն ուղղված գործառույթների համապատասխան պարտականությունների կատարումը:

ժ/ քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

ի/ իրականացնում է իր պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

2.Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) միջնակարգ կրթություն, առանց աշխատանքային ստաժի

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության Հողային , Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերի, <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ)տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը

դ)ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2021 թվականի ապրիլի 6-ին, Ժամը12:00-ին՝ Աղավնատուն համայնքապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք Աղավնատուն համայնքապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին:

- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով

- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

- արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները.

- մեկ լուսանկար 3X4 սմ չափի

- անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքապետարան (հասցե՝ Ն.Մաթևոսյան պող 25, հեռ.0231 6-00-75) և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցեն՝ Աբովյան 71, հեռ. 0237 2 76 49):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 18^{00}-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2021 թվականի մարտի 22-ը՝ ժամը 18^{00}-ն: